

րութեանը համար իրաւունք կունենան կամ ամէն ազգի ու ամէն աշխարհքի պարծանք սեպուելու, և կամ իրենք միայն մէկտեղ՝ զատ ազգ մը կամ ցեղ մը համարուելու, հասարակ մարդիկներէն վեր ու գերազանց: Ըստպիսի կարգէ դուրս մարդիկներէն մէկն էր Սարկոս Տուղղիոս Արկերոն, հռովմայեցւոց լեզուին զարդարողը, և մարդկային ճարտասանութեան օրինակն ու պարծանքը: Բրիտոսուէ 106 տարի առաջ ծնաւ Արկերոն հռոմ քաղքին մօտերը, ու միայն իրեն արդիւնքովը թէ ուսմանց և թէ իշխանութեանց մէջ շատ առաջ երթալէն ետքը, երբոր հռովմայեցւոց տէրութիւնը հոկտաւիոս, Լնտոնիոս ու Եպիդոս անունով եռապետներուն ձեռքը անցաւ, անոնց թշնամիներուն հետ Արկերոն ալ թըրին բերանը գնաց 64 տարեկան:

Պզտիկուց ՚ի վեր խիստ ուսումնասէր էր կրսէն. հռոմին մէջ գտնուած երևելի վարպետներուն աշկերտը ըլլալէն ետև, իրեն ուսմունքը աւելի կատարելագործելու համար յունաստան անցաւ, որ ան ատենը խիստ ծաղկած էր: Ըմէն տեսակ ուսման ձեռք զարկաւ, և ամէնուն մէջ ալ անուանի եղաւ. ճարտասանութեան կողմանէ Վեմոսթենէսին հաւասարեցաւ, ու գրեթէ գերազանցեց ալ փիլիսոփայութեան կողմանէ Պլատոնին հասաւ, և թղթագրութեան ոճին կողմանէ յունաց ու հռովմայեցւոց վարպետներէն ալ շատ վեր անցաւ: Արկերոնին փառքը անմահացրնող գրուածքներն են իրեն ճառերը, թղթերը, և ճարտասանական ու փիլիսոփայական գրքերը:

Ճարտասանութե կողմանէ թեպէտ և Վեմոսթենէսին կրակը կամ կայծակը չունի, ինչպէս ինքն ալ կը զրուցէր, բայց նոր նոր գիւտերու և աղուոր դարձուածքներու կողմանէ անկէ ալ վեր է: Բնտանեկան թղթերը առ Լտտիկոս, առ Բրուտոս, առ Աուլինտոս, խիստ անուանի են՝ ոճին

յստակութեանը, և ամէն կողմանէ շատ կատարելութեանցը համար: Իրեն ճարտասանական և փիլիսոփայական գրքերը կարգալու ատեն մարդ կըսքանչանայ վսեմութեանն ու պարզութեանը վրայ:

Յաղագս Պապղաճից ըսուած գիրքը խիստ անուանի է ուղիղ բարոյականին ու խելացի և յստակ ոճին համար. ասոր հայերէնը որ շատոնց թարգմանած է, յուսանք որ քիչ ատենէն կըտպուի:

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Պորթ ապակիներն ու յախճապակէ անօրները կ'պցընելու սոսինջ:

Եւրո մը մէջ գիր ունկի մը ձիւթ՝, ասոր վրայ լեցուր այնչափ գինիի ու գիթ՝ որ ձիւթը լուծի. ուրիշ ամանով լուծէ ունկի մը ձկան սոսինձ՝ պարզ ջրի մէջ: Երբոր աս ձկան սոսինձը ջրին մէջ աղէկ մը կըկակըղնայ, գիր անիկայ ումի կամ ցքի մէջ, որպէս զի լուծուի ու թանձրանայ. ան ատեն մէջը աւելցուր ունկի մը ամմոնիաքի խէժ՝ փոշի գարձած. աս երկու խառնուրդը, այսինքն ձիւթն ու ձկան սոսինձը լեցուր հողէ ամանի մը մէջ, ու չափաւոր ջերմութե գիր: Երբոր աս ամէն նիւթերը կըմիանան ու բոլորը մէկ զանգուած կամ հեղուկ մը կըգառնայ, գիր մէկ շիշի մը մէջ ու բերանը ամուր մը գոցէ: Երբոր կուզես աս սոսինձէն գործածել, առ շիշը՝ տաք ջրի մէջ դիր, ու ան ապակէ կամ յախճապակէ նիւթերն ալ որ կուզես կայցընել՝ տաքցուր: Ըղէկ կըլայ որ կայցընելէն ետքը 12 ժամի չափ ան կտորները մէկմէկու հետ կպած կենան՝ ինչուան որ սոսինձը չորնայ. անկէ ետքը ան կպած տեղն ալ չկտորած տեղերուն պէս ամուր կըմնայ:

1 ՍՊԳԸԸ: 3 ՊՊԸԸԸ ԲՈՒԹՊԸԸ:
2 ԵԸՔՈՒԸ ԶՔԱՐԿՕՒԸ:

Ս՝ Թափներէն՝ աղապելու հնարք :

Ա՛յդտի կլորկեկ բարակ շիշ՝ մը՝
 2 կամ 3 բթաչափ տրամագծով . աս
 շիշին իրեք մասին երկուքը զօրաւոր
 քացախով լեցուր , բերանն ալ սուն-
 կով՝ ամուր մը գոցէ : Սունկին մէջ
 տեղը ծակէ ու ապակէ բարակ խո-
 ղովակ մը անցուր՝ չորս բթաչափ եր-
 կայնութեամբ . ան խողովակին մէ-
 կալ ծայրը կանթեղին բոցին բռնէ
 ինչուան որ հալի ու ծակը ամենաբա-
 րակ ըլլայ : Ատքը ան շիշը առ , քիչ
 մը այրած ածուխի կրակին վրայ դիր-
 երբ որ կըսկսի եռալ՝ խողովակին բա-
 րակ ծակէն շոգին յորդութիւն գուրս
 կելլէ , սենեկին մէջ կըսարածուի , և
 մոծակները խումբ խումբ պատուհան
 ներէն դուրս կըփախչին . իսկ անոնք
 որ շոգին ելած տեղէն կանային՝ կի-
 սամեռ գետին կըթափին : Այբոր
 քացախը խիստ կըքիչնայ ու տակի
 դիրտը միայն կըմնայ , պէտք է թափել
 անիկայ ու մէջը նոր քացախ դնել :
 Աւելի աղէկ կըլլայ աս գործողութիւնը
 թէ որ սենեակը մթնցընելէն ետ-
 քը ընես . այսինքն պատուհաններուն
 փեղկերը գոցես ու մէկ հատը միայն
 կէս մը բաց թողուս . նմանապէս գի-
 շերը կուզես ընել նէ՝ սենեկիդ դռնէն
 դուրս ճրագ մը վառէ , դուռդ ալ վրայ
 ըրէ , անանկ որ քիչ մը բացուած մնայ .
 մոծակները լոյսը տեսնելով՝ դէպ ՚ի
 ան կողմը կըթռչին ու շուտով դուրս
 կելլեն :

Կանխորոյս կովերոան դեղ :

Կովերը երբեմն մասնաւոր հիւանդ
գութի մը կուենենան որ անով իրենց

1 Սիւրի - Ինէ : 2 Փոլսոյ շիշ : 3 Սոնոր :

կաթը կըվազէ . աս բանիս այսպիսի
 պարզ դեղ մը գտաւ Կերէն՝ անուշով
 փարիզուերեւելի բժիշկը : Իրտիկաւը
 կառնէ ու քացախով կըշաղուէ . ան
 զանգուածէն կովուն ծիծերուն վրայ
 կըդնէ՝ ու օրը երկու անգամ կըփոխէ :
 Սուրիշներն ալ աս բանս փորձեցին որ
 յաջողեցաւ :

Ս՝ Երնոպոլեան՝ դեղ :

ՊԵՐԼԻՆԻ Իտլեր անուշով երեւելի
 բժիշկը աւջինը եղաւ որ աս հիւանդ
 դութեան դէմ լեղակ՝ գործածեց :
 Աստի աս է . փոյի դարձած լեղակ
 1 ունկի (8 տրամ) . ծեծած համեմ
 մը 1 տրամ , այնչափ ալ շաքարաջուր՝
 որով աս նիւթերս կարենան շաղուիլ
 ու թանձրանալ : Առջի բերան աս
 չափին կէսը մէկ օր մը կուտաս հի-
 ւանդին , կէսն ալ երկրորդ օրը . քանի
 մը օրէն ետքը այսչափը մէկ օրուան
 մէջ ալ կընաս տալ , և հիւանդին
 ծանրութիւնը նայելով՝ լեղակը վեցէն
 ինչուան ութը տրամ կընաս տալ .
 րուան մէջ : Այ դեղը փորձերով շատ
 յաջողեցաւ . 26 վերնոտներէն վեցը
 բոլորովին առողջացան և հիւանդու-
 թիւննին մէյմըն ալ չկրկնեց . իրեքին
 հիւանդութիւնն ալ անանկ թեթե-
 ցաւ որ ութը ամիսը մէյմը կամ տա-
 ըին մէյմը կըբռնէր . տասնըմէկ հոգի
 շատ տարբերութիւն իմացան , ու բա-
 ւական առողջացած՝ հիւանդանոցէն
 ելան . վեց հոգւոյ միայն աս դեղս
 չզօրեց :

1 Guérin. 3 Չիլի :
2 Թոմարեթ , սարա , կեվալէ : 4 Շիւօթ :